«Երևանի Վիլյամ Սարոյանի անվ. հ.138 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի

2022-23 ուստարվա

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022-2023 ուսումնական տարում դպրոցի աշխատանքները կազմակերպվել են դպրոցի զարգացման ծրագրի դրույթների համաձայն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության աշխատանքային ցուցումների հիման վրա, Երևանի քաղաքապետի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի , հրամանների, որոշումների, կարգադրությունների և նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

2022-2023 ուստարվա սկզբից դպրոց են հաճախել 438 սովորող՝ 18 դասարանով: Ուստարվա ընթացքում ընդունվել են 10 սովորող, հեռացել 29-ը՝ հիմնականում բնակավայրի փոփոխության պատճառով: Ուստարվա ավարտին սովորողների թիվը կազմել է 419: Այս ուսումնական տարում սովորողները բավականին մեծ առաջադիմություն ցուցաբերեցին ուսուցման ընթացքում: 2022-23 ուստարում գերազանց առաջադիմություն ունեն 115-ը, հարվածային են 120 սովորող: Առաջադիմությունը 100 է, որակը՝ 66%:

Ուստարվա ընթացքում համագործակցված աշխատել են ուսումնադաստիարակչական , տնտեսական բաժինները՝ ապահովելով դպրոցի մանկավարժական անձնակազմի և սովորողների ներդաշնակ աշխատանքային գործընթացը:

Մանկավարժական անձնակազմի նվիրված աշխատանքի շնորհիվ լիարժեք ու համակողմանի է դառնում դպրոցական կյանքը:

Ժամանակին և հիմնավոր կատարված դասաբաշխումը հնարավորություն տվեց անձնակազմին աշխատել արդյունավետ:

Դպրոցի առարկայական մասնախմբերը /<<Հայոց լեզու և գրականություն>>, <<Օտար լեզու>>, <<Բնագիտական>>, <<Հասարակագիտական>>, <<Տարրական>> / հիմնական օղակներն են ուսուցչին օգնելու, նրա մեթոդական աճին նպաստելու և դասավանդման որակը բարձրացնելու գործում: Ուստարվա սկզբին քննարկվել և ամբողջական տեսքի են բերվել առարկայական մասնախմբերի աշխատանքային պլանները, ներկայացվել են տնօրենի հաստատման և էլտարբերակները վերբեռնվել են պաշարների շտեմարան: Ներկայացվել են ԿԳՄՍ նախարարի 20.07.2021թ.-ի N54-Ն հրամանով հաստատված 2021-22 և 2022-23 ուստարիների օրինակելի պլանները: Ուսումնական պլանով նախատեսված բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ, կազմվել է դասացուցակ՝ համաձայն սահմանված կարգի: Քննարկվել և տնօրենի հաստատման են ներկայացվել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները և ապահովվել է դրանց վերբեռնումը ԴԿՏՀ-ում:

Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները ծանոթացել են ԿԶՆԱԿ-ի առաջարկած մեթոդական ցուցումներին, ԿԳՄՍ նախարարի, ՀՀ կառավարության որոշումներին , օրենսդրական փոփոխություններին, նաև տեղի են ունեցել նախագծերի քննարկումներ: Հոկտեմբեր ամսին, սահմանված ընթացակարգով, վերապատրաստվել և ատեստավորվել են 12 ուսուցիչ՝ ստանալով համապատասխան վկայագրեր: Բոլոր ուսուցիչները համապատասխանում են զբաղեցրած պաշտոններին: Փետրվար, մարտ, ապրիլ ամիսներին իրականացվել են մշտադիտարկումներ վերապատրաստում անցած ուսուցիչների մոտ: Արդյունքները քննարկվել և վերլուծության են ենթարկվել առարկայական մասնախմբերի նիստերում:

Ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է էլմատյանում կատարված գրանցումների վերահսկողություն, ուսուցիչների բացակայության հաշվառում և դասաժամերի փոխարինում:

Ներդպրոցական վերահսկողության շրջանակում ուսման առաջադիմության, դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման նպատակով կազմակերպվել են փոխադարձ դասալսումներ, սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում: Դասալսումներին ընդգրկված էին դպրոցի առարկայական մասնախմբերի բոլոր ուսուցիչները: Արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել աշակերտների ուսումնական բոլոր պարագաների առկայության և դասերին պատրաստականության վրա, ինչպես նաև վերանայել տնային առաջադրանքների ծանրաբեռնվածությունը:

2022-2023 ուստարում դպրոցում գործող մասնախմբերը հիմնականում կատարել են իրենց ծրագրերով նախատեսված աշխատանքները. Կազմակերպվել են

- ✓ փոխադարձ դասալսումներ 188 ժամ
- ✓ առարկայական ուսումնասիրություններ 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում
- ✓ բաց դասեր - 14

Յուրաքանչյուր մասնախումբ իր աշխատանքը կազմակերպել է՝ ելնելով ՀՀ պետական հանրակրթական հաստատության օրինակելի կանոնադրության ընդհանուր դրույթներից:

Մեթոդական մասնախմբերի աշխատանքում առանձնահատուկ տեղ է տրված սովորողների ճանաչողական ունակությունների զարգացմանը և նրանց ինքնուրույն աշխատանքին:

Ուսումնական տարվա ընթացքում հրավիրվել է մանկավարժական խորհրդի 10 նիստ:

Քննարկվել են ինչպես առարկայական, մեթոդական, այնպես էլ կազմակերպական հարցեր: Մանկավարժական խորհուրդն ունեցել է պլանավորված օրակարգեր՝ իրավասության շրջանակներում:

Մայիս-հունիս ամիսներին նոր ՀՊՉ-ի ներդրման շրջանակում իրականացվել են վերապատրաստումներ, որոնց մասնակցել են նոր ուսումնական տարում 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները:

Ուստարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք դպրոցական միջոցառումներ: Կից ներկայացվում է 2022-23 ուսումնական տարվա միջոցառումների ցանկը:

Դպրոցի սովորողները մասնակցել են իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը: Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողները աշխորհրդի գլխավորությամբ կազմակերպել են համաժողովներ, սեմինարներ, կլոր-սեղաններ, քննարկումներ: Տնօրինությունը խթանել է սովորողների աշխատանքը, քննարկել, վերլուծել, հավանության արժանացրել նրանց նախաձեռնությունները:

Դպրոցի սովորողները մասնակցել են դպրոցական և տարածքային օլիմպիադաներին: 9-րդ դասարանի աշակերտ Իրինա Գյոլեցյանը արժանացել է հանրապետական օլիմպիադայի 3-րդ կարգի դիպլոմի <<Գրականություն >> առարկայից:

Դպրոցը շարունակում է իրականացնել ներառական կրթություն, հենվելով դպրոցի ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի հմտության, փորձառության և կարողությունների վրա: Դպրոցում հետևողական աշխատանք է տարվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների հետ: Դասղեկներին, ուսուցիչներին տրվել է հանձնարարական աշխատել ծնողների հետ՝ բացահայտելու այն խնդիրները երեխաների մոտ, որոնք կպահանջեն անհատական մոտեցում:

Դպրոցը լուրջ գործընթաց է իրականացնում ներառական կրթությունը բարելավելու գործում՝ որդեգրելով հետևյալ սկզբունքը, որ ամեն երեխա ունի առանձնահատուկ մոտեցման և վերաբերմունքի կարիք:

Ուսումնական տարվա ընթացքում համակարգվել են մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող խմբի աշխատանքները, 5 սովորող ներկայացվել են կարիքի գնահատման և վերագնահատման : Ընդամենը դպրոցում վկայագրված է 17 սովորող: Յուրաքանչյուր ամիս հրավիրվել են խորհրդակցություններ, կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Ներառված աշակերտները մասնակցել են համադպրոցական միջոցառումներին:

Ստեղծվել է աշխատանքային նոր՝ էրգոթերապիայի սենյակ:

Բազմամասնագիտական թիմի մասնագետներն ուստարվա ընթացքում իրականացրել են հանդիպումներ ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնողների հետ անհատապես, քննարկվել են աշխատանքի հետ կապված դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները:

Դպրոց-ծնող կապի իրականացման և ամրապնդման շնորհիվ դպրոցում ձևավորվել են ծնողական խորհրդի և մանկավարժական կազմի կողմից երեխաների կրթության ու դաստիարակության հարցում միասնական պահանջներ: Ծնողներն ակտիվ մասնակցում են արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին:

Դպրոցում կազմակերպված գրեթե բոլոր միջոցառումներին ներկա է ծնողների մի ստվար զանգված, որը մշտապես մասնակցում է սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը և աջակցում է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին: Դպրոցի ծնողական խորհուրդը աջակցել է դասղեկներին արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը :

2022-23 ուստարին ավարտվեց բավականին արդյունավետ: Մանկավարժական կոլեկտիվը, առաջնորդվելով “Արդյունավետ գործունեություն և ուսման բարձր որակ“ նշանաբանով, գործադրելով բոլոր ջանքերը, որպեսզի վաղվա օրն ավելի առաջադիմական լինի, ամեն ինչ ի շահ դպրոցի ընդհանուր գործի բարելավման:

Համաձայն 2022թ.-ի դեկտեմբերի 6-ի սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին հրաման 78-Ն -ի դպրոցում կազմակերպվեց 4-րդ դասարցիների համար գիտելիքների ստուգում և 9-րդ դասարանցիների համար ավարտական քննություններ: 42 սովորող ստացան ավարտական վկայականներ: Գերազանցության վկայականներ ստացան 9 աշակերտ:

II-VIII դասարանների տարեկան 9-10 միավոր գնահատված և լավ վարք ունեցող թվով 80 աշակերտ պագևատրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված գովասանագրերով: Կրթության որակն արդյունք է այնպիսի ուսումնառության համակարգի, որը համապատասխանում է պետական պահանջներին և սովորողներին ապահովում անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, արժեքային համակարգով ու որակներով՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով նրանց սովորել ամբողջ կյանքի ընթացքում:

Կրթության որակը ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքն է, ուստի ներառում է սովորողներին, ուսմիջավայրը, կրթության բովանդակությունը, որակյալ ուսուցչական կազմը, հմուտ ղեկավարվող ուսումնական գործընթացը և արժանահավատ ու արդար գնահատման համակարգը և ուսուցման վերջնարդյունքները, որոնք ներառում են սովորողների գիտելիքները, հմտությունները, արժեքային համակարգն ու աշխարհահայացքը:

<<Երևանի Վիլյամ Սարոյանի անվան հ.138 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի

տնօրեն Լ. Հովհաննիսյան